ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0009, Տերյան 89, 010-52-01-23

42/45.11/16886-2025

25-02, 30-05-2025

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃՅՈՒՂԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԻԿԻՆ ԱՆԱՀԻՏ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ

(հասցե՝ ք.Երևան, Վ. Սարգսյան 26/3, 501ս.
profrosgu@gmail.com, հեռ.՝ 01010580582)

Հարգելի՛ տիկին Ասատրյան,

Ի պատասխան Ձեր 2025 թվականի մայիսի 16-ի աշխատանքային կարգով ներկայացված գրության՝ կից ուղարկում ենք «Հանրապետական կոլեկտիվ պայմանագրում» դրույթներ ընդգրկելու առաջարկությունների վերաբերյալ Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի կարծիքը:

5/23/2025

X

VERIFIED OCSP 23/05/2025 16:11:07 GMT+4

Signed by: KALASHYAN VACHE 3014660477

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ՎԱՉԵ ՔԱԼԱՇՅԱՆ**

Կատարող՝ կազմակերպաիրավական վարչություն,
Ա. Ալավերդյան, հեռ՝.010 515 408

ԿԱՐԾԻՔ
«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈԼԵԿՏԻՎ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ» ԴՐՈՒՅԹՆԵՐ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Հանրապետական կոլեկտիվ պայմանագրում» դրույթներ ընդգրկելու առաջարկությունների վերաբերյալ (այսուհետ՝ Առաջարկություն) հայտնում ենք հետևյալը՝

1. Առաջարկությունների Սոցիալական գործընկերություն բաժնի 2-րդ կետով առաջարկվում է «Հանրապետական կոլեկտիվ պայմանագրում» նախատեսել հետևյալ դրույթը՝

քայլեր ձեռնարկել պետական ծառայողների վարձատրության բարձրացմանն ուղղված, այդ թվում՝ ընդունել գործողությունների ժամանակացույց, պարբերաբար կազմակերպել քննարկումներ և այլ միջոցառումներ:

Այս առումով հարկ է նշել, որ պետական ծառայողների վարձատրության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքով: Հիշյալ օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության չափերի փոփոխությունն իրականացվում է բազային աշխատավարձի և (կամ) գործակիցների փոփոխության միջոցով՝ ըստ մասնագիտությունների և տարածքների աշխատանքի շուկայի վերլուծության հիման վրա, որն իրականացվում է յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով: Հետևաբար առաջարկվող գործողությունները, միջոցառումները պետք է դիտարկել բազային աշխատավարձի բարձրացման շրջանակում:

2. Առաջարկությունների 3-րդ կետով առաջարկվում է «Հանրապետական կոլեկտիվ պայմանագրում» նախատեսել հետևյալ դրույթը՝

քննարկել հանրային ծառայողների համար տարիքային սահմանափակումների հետզհետե վերացումը: (Որպես փորձնական քայլ՝

սահմանել, որ 65 տարին լրացած հանրային ծառայողների հետ գործատուն կարող է կնքել մինչև 3 տարի ժամկետով պայմանագիր, ընդ որում, արհմիության անդամությունը խրախուսելու նպատակով, կարելի է սկսել միայն արհմիության անդամներից):

Այս առումով հարկ է նշել, որ Աշխատանքային օրենսգրքի 114-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետի իրավակարգավորման համաձայն՝ *աշխատանքային պայմանագրի լուծման օրինական պատճառ չի կարող համարվել տարիքը՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:*

Աշխատանքային օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ մասի իրավակարգավորումներով սահմանված է, որ *հանրային պաշտոններ և հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց, (…) աշխատանքային (ծառայողական) հարաբերությունները կարգավորվում են սույն օրենսգրքով,* ***եթե համապատասխան օրենքներով այլ բան նախատեսված չէ:***

«Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը 65 տարին է: Քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը լրանալու դեպքում տվյալ պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի որոշմամբ տվյալ պաշտոնում ծառայության ժամկետը կարող է երկարաձգվել մինչև մեկ տարի ժամկետով՝ մեկ անգամ:*

Անդրադառնալով ներկայացված առաջարկին՝ հարկ է նկատել, որ հանրային ծառայության մեջ ընդգրկված պետական ծառայության առանձին տեսակները կարգավորող օրենքներով, ինչպես նաև համայնքային ծառայության օրենքով նույնպես նախատեսված է տվյալ ծառայության պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքային շեմ: Հարկ է նշել, որ «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով արդեն իսկ նախատեսված է քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը լրանալու դեպքում տվյալ պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի որոշմամբ

տվյալ պաշտոնում ծառայության ժամկետը մինչև մեկ տարի ժամկետով մեկ անգամ երկարաձգելու իրավական հնարավորություն:

Բացի այդ, պետական մարմիններին վերապահված գործառույթների իրականացման **արդիականացումը, ժամանակի մարտահրավերները ենթադրում են նաև պետական մարմիններում անձնակազմի հավաքագրման և համալրման ընթացքում** երիտասարդ և առավել մրցունակ կադրերի ներգրավման հնարավորության ընձեռում, քանի որ մարդկային ռեսուրսների կառավարումը համարվում է պետական մարմնի ռազմավարական զարգացման անբաժանելի մասը և ի թիվս այլնի, նաև վերոնշյալ հանգամանքով է պայմանավորված հանրային ծառայությունը կարգավորող օրենքներով առավելագույն տարիքային շեմ սահմանելը:

Հաշվի առնելով վերագրյալը՝ հայտնում ենք, որ հանրային ծառայությունը կարգավորող օրենքներով հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքային շեմ սահմանելը ինքնանպատակ չէ և պայմանավորված է հանրային ծառայության ոլորտային առանձնահատկությամբ, իսկ ցանկացած օրենսդրական փոփոխություն նախաձեռնելիս անհրաժեշտ է հիմքում ունենալ հանրային ծառայության առանձնահատկությունների հաշվառմամբ գործառույթների պատշաճ իրացումը ապահովող փաստարկված վերլուծություններ, ելակետային տվյալներ:

Միաժամանակ գտնում ենք, որ Առաջարկությունների 3-րդ և 4-րդ կետերով ներկայացված առաջարկները խտրական դրույթներ են բովանդակում:

3. Առաջարկությունների 5-րդ կետով առաջարկվում է «Հանրապետական կոլեկտիվ պայմանագրում» նախատեսել հետևյալ դրույթը՝

հաշվի առնելով Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից շրջանառված օրենսդրական նախաձեռնությունը աշխատանքային օրը կրճատելու վերաբերյալ, քննարկել մինչև դրա ընդունումը որպես պիլոտային ծրագիր այն պետական աշխատողների համար կիրառելու հարցը:

Այս առումով գտնում ենք, որ ներկայացված աշխատանքային օրվա կրճատումը չի ենթադրում նախնական փորձարկումների իրականացում

հետագայում այն լիարժեք իրականացենելու նպատակով: Բացի այդ, որևէ ծրագրի փորձարկման համար անհրաժեշտ են համապատասխան իրավական հիմքեր:

4. Առաջարկությունների Այլ հարցերի շարքում առաջարկվում է «Հանրապետական կոլեկտիվ պայմանագրում» նախատեսել հետևյալ դրույթը՝

քայլեր ձեռնարկել ՀՀ-ում «մեդիանային» (միջնարժեքային) աշխատավարձի հաշվարկի համար:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ Կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1420-Ն որոշման N 1 հավելվածի 4-րդ կետի համաձայն՝ լիազոր մարմինը (Քաղաքացիական ծառայության գրասենյակը) ի թիվս այլ ցուցանիշների 2025 թվականից սկսած հաշվարկելու և գնահատելու է նաև աշխատավարձի միջնարժեքը (մեդիանը) պետական ծառայության համակարգում: